Դ.

# ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ
# ՍԿՈԹՈՍԻ ԱՍՏՈՒԱԾԱԲԱՆՈՒԹԵԱՆ
# (1729)։

## Ձեռագիր Աշխ. Մատենադարանի Թիւ 3։

*"Յիշատակարան Թարգմանել տուողի գրոց"*

*"Երեքերանեան աստուածաբանապետն Եկեղեցւոյն Քրիստոսի, աստուածայինն Դիոնէսիոս, ի գիրս Աստուածային Անուանց Եօթներորդ գլխոյն ասէ թէ, Պիտոյ է մեզ աղօթիւք նախ համբառնալ առ սուրբ Երրորդութիւնն, որպէս յօկիզըն բարւոյ եւ հպելով ի նա՝ աղօթիւք ուսանել զամենայն բարի պարգեւսն, որ շուրջ զնովաւ են սերտեալ. զի ինքն յամենեսին մերձ է, այլ ոչ ամենայն մերձ ի նա։ Քանզի բանական բաղձանք իմանալեացն էութեանց եւ որք ներ եթերականին եւ ծօգիակուսին սորբեւ կանն պարագրեալք՝ հանգոյն վերնալոյց տարերն հրեղինի ձկտին որքան կարեն հասանիլ, առ ծայրն բարութեամբ անեզրականի ի վայելումն անչափելւոյ բարութեան իւրեանց արարչի. բայց զի ոմանք զընդիմատիպն բարւոյն կամաց ի տեղի նիւթոյ ողջունեալք անդր քան զհողեղէնս տարր ստորասուզեալք յանկարելոյ տեղի տաղտապին, եւ ոմանք մարմին ունելով եղծանելի՝ հոգւով ծանրացեալք զօրէն կապարի սուզին ի ջուրս սաստիկս։ Վասնորոյ փոխանակ անյեղլի բարւոյն անփոփոխ չարին հանդիպին։ Եւ այս վասն այսորիկ զի ոչ ընտրեն զԱստուած ունել առաջնորդ գիտութեան եւ*